ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ստեղծագործական ծրագրերին աջակցություն ցուցաբերելու նպատակով հայտարարում է **դրամաշնորհային մրցույթներ**՝ հետևյալ անվանակարգերով.

- «Ստեղծագործական կրթական ծրագրեր և նախագծեր»,
- «Կինոարվեստի նախագծեր»,
- «Արվեստի ոլորտի ստեղծագործական ծրագրեր և նախագծեր»,
- «Մշակութային միջոցառումների իրականացում ՀՀ մարզերում»:

Մրցույթին կարող են մասնակցել **իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունները**, որոնք գրանցված են **www.armeps.am** էլեկտրոնային գնումների համակարգում:

Հայտերի ներկայացման կարգը, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և մասնակցության պայմանները ներկայացված են համապատասխան անվանակարգերի հրավերում, որոնք հասանելի են՝ **www.armeps.am** համակարգում, ՀՀ ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքի **«Ծրագրեր»** բաժնի **«Դրամաշնորհային ծրագրեր»** ենթաբաժնում

/ https://escs.am/am/category/grantsprograms / :